ՀԱՅԱՍՏԱՆ

Հոկտեմբերի 18, 2023

Առանցքային տվյալներ.

100,632
փախստական է եկել Հայաստան

ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

1,364 ծածկոց

1,001 անկողնային պարագա

978 բարձ

376 հիգիենայի հավաքածու

345 խոհանոցային հավաքածու

333 ներքնակ

Ֆինանսավորում.

12.8 մլն ԱՄՆ դոլար

է պահանջվում 2023 թվականին, այդ թվում՝ արտակարգ իրավիճակին արձագանքելու համար

Ֆինանսավորված՝ 29%

Պակասող ֆինանսավորում՝ 71%

3.7 մլն ԱՄՆ դոլար

է ստացվել առ 2023 թ. հոկտեմբերի 4

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

www.unhcr.org

Իրավիճակի վերաբերյալ թարմ տվյալներ.

Այս տարվա սեպտեմբերի 24-ից ի վեր Հայաստան եկած 100,632 մարդկանց 99%-ը հաշվառվել է ՀՀ կառավարության կողմից: Վերջինիս տվյալներով՝ այդ մարդկանց 80%-ն տեղավորվել են ժամանակավոր կացարաններում՝ գլխավորապես հյուրանոցներում, ոչ բնակելի շինություններում եւ չբնակեցված առանձնատներում ու բնակարաններում: Փախստականների 26%-ը գրանցվել է առողջության առաջնային պահպանման կենտրոններում, իսկ երեխաների 40%-ն արդեն դպրոց են հաճախում:

Արձագանքում արտակարգ իրավիճակին

Պաշտպանություն.

- Ցայսօր ՄԱԿ ՓԳՀ-ն պաշտպանության մշտադիտարկում է իրականացրել մարդասիրական օգնության համակարգման 33 կենտրոններում եւ Հայաստանի տարբեր մարզերի 79 տնային տնտեսություններում: Առավել հրատապ կարիքներից փախստականներն առանձնացրին կացարանի եւ ցուրտ եղանակին համապատասխան ձմեռային հագուստի եւ կոշիկի անհրաժեշտությունը: ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրել է նաեւ ոչ բնակելի շինություններում ապրելու պայմանների բարելավման կարիքը:

Դրամական աջակցություն եւ ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

- ՄԱԿ ՓԳՀ-ն փախստականների շուրջ 550 խոցելի ընտանիքների (մոտավորապես 1,350 հոգի) տրամադրել է ՈՊԱ՝ ծածկոցներ, ներքնակներ եւ հիգիենայի պարագաների հավաքածուներ: Փախստական բնակչությունը մեծապես շարժունակ է եւ ընտանիքների մեծ մասը կենտրոնացած է Երեւանում, Արարատի, Սյունիքի, Կոտայքի եւ Արմավիրի մարզերում: Այս պահի դրությամբ 29 բեռնատարներից 17-ը՝ բեռնված ՈՊ�Ա-ով, արդեն առաքված են:
- Դրամական աջակցության աշխատանքային խմբի համանախագահող ՄԱԿ ՓԳՀ-ն Հայաստանի կառավարությանն օգնում է ընդլայնել դրամական աջակցության հասցեական ծրագիրը՝ ըստ խոցելիության գնահատման: ՄԱԿ ՓԳՀ-ն հանձն է առել դրամական օգնությամբ օժանդակելու 5,500 փախստականի՝ առաջիկա ձմեռային ամիսների բնակարանային վարձավճարների փոխհատուցման համար:

Համակարգում

Փախստականների հարցերի համակարգման հարթակի առաջին նիստը, Երեւան, հոկտեմբերի 17, 2023 թ.

Հոկտեմբերի 17-ին ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը եւ ՄԱԿ ՓԳՀ-ն ներկայացրեցին Փախստականների կարիքներին արձագանքման ծրագիր (ՓԿԱԾ), որին մասնակցեցին ավելի քան 100 ներկայացուցիչներ Կառավարությունից, դեսպանատներից, Հայաստանում գործող ՄԱԿ գործակալություններից, ՀԿ-ներից եւ փախստականների կողմից ղեկավարվող կազմակերպություններից: ՄԱԾ-ը շեշտադրվում են արտակարգ իրավիճակում պաշտպանությունը եւ օգնությունը, միաժամանակ կարեւորելով ներառականությունը, դիմակայությունը եւ լուծումները՝ մշակված ինչպես փախստականների, այնպես էլ ընդունող համայնքների համար: Այդ նույն օրը ՀՀ փոխվարչապետի հրավերով գումարվեց նաեւ Փախստականների հարցերի համակարգման ֆորումի (ՓՀՖ) առաջին նիստը, որը նվիրված էր խնդիրների կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ արձագանքներին: ՄԱԿ ՓԳՀ-ն մասնակցում է Կառավարության կողմից ղեկավարվող ՓՀՖ-ին եւ աջակցում Կառավարության ջանքերին՝ տրամադրելով ուղղորդում, տեխնիկական խորհրդատվություն եւ այլ աջակցություն:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին աջակցության համար. Բելգիա | Կանադա | Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Ճապոնիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մանրամասն տեղեկությունների խնդրում ենք համար կապ հաստատել.
ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, armye@unhcr.org